ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2024Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 915 625 800 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 146 194 089 դրամ, կամ 1-ին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 23,3 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 803 087 700 դրամի դիմաց կատարվել է 369 261 289 դրամ կամ կատարվել է 20,5 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 269 273,7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 252 389,9 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 19,5 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 13,2 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 18,0 %-ով, տեղական տուրքերը՝ 59,4 %-ով, պետական տուրքերը՝ 34,4 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 90 846,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 53 993,47 հազ. դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 20 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 6 871,9 հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 777 000,7 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 510 211,3 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 116 803,43 հազ. դրամ,կամ կատարվել է 22,9 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 9,1 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 56,3 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 799,6 հազ. դրամ՝ 3 998,0 հազ. դրամի դիմաց :

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 406 583,6 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 81 387,75 հազ. դրամ կամ կատարվել է 20 %, որից աղբահանության վճարների մասով 168 050,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 35 180,13 հազ. դրամ կամ կատարվել է 20,9 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 24,1 %-ով:

<u>Ծախսեր</u>

2024 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել են 14,3 %-ով՝ 4 915 625,8 հազ. դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 703 799,92 հազ. դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 14,7 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 8,9 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 22,9 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 29,9 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 19,6 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 19,8 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 12,8 %-ով:

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 2 144 152,095 հազ. դրամի դիմաց կատարվել է 1 091 491.608 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 850 087.616 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 154 667.052 հազ. դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 85 869,44 հազար դրամ և այլ մուտքեր՝ 867,5 հազար դրամ:

2024 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 326 791,86 հազ. դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի , շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման և կառուցման, համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և հիմնանորոգման, համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, մանկապարտեզների կառուցման համար ծախսերը կազմել են 307 067,046 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 16 945,081 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 2 779,733 հազար դրամ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ